ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

15-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 115 Ա

## ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ԱԲԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի բնակչուհի Մարիամ Աբելի Հովհաննիսյանի սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-018-013-007, տարածքը՝ 0,185հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ բնակավայր, փողոց 4, տուն 11 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

15-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 116 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 18/04/2018թ. թիվ 39Ա որոշումը

*որոշում եմ՝*

2020 թվականի հուլիսի 24-ին ժամը 11:00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի շենքում կազմակերպել աճուրդ Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերի համար՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով.

ա/10-029-0574-0001 ծածկագրով, 0,23081 հա մակերեսով, 10-029-0124-0008 ծածկագրով, 0,44281 հա մակերեսով, 1 լոտ,

գ/10-029-0116-0031 ծածկագրով, 0,67212 հա մակերեսով, 1 լոտ,

դ/10-029-0109-0048 ծածկագրով, 0,66 հա մակերեսով, 1 լոտ,

- մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով,
- աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը 2020 թվականի հուլիսի 20-ին, ժամը՝ 18:00-ին,
- նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով,
- քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով,
- հողամասն ապահովված է մոտեցման ճանապարհով, հողամասերում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն և հողամասերի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան,
- մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր,
- մասնակցության վճարը 10 000 դրամ:
- Կայանալիք աճուրդի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետության օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*
18-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 116 Ա

## ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՅԿԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի բնակիչ Վարազդատ Հայկի Ղարիբյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Ազնիվ Աղաջանի Արամյանի /կինը/, Սաթիկ Վարազդատի Մարտիրոսյանի /աղջիկը/, Հայկ Վարազդատի Մարտիրոսյանի /որդին/, Լյուդմիլա Փափակի Ենոքյանի /հարսը/, Արմեն Հայկի Մարտիրոսյանի /թոռը/ սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-009-022, տարածքը՝ 0,059հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, փողոց 19, փկղ. 2, տուն 14 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

18-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 117 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋԵՄԱ ԱՐԱՄԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 24,1 Ք/Մ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՙՏեղական ինքնակառավարման մասին՚ Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26/12/2002թ. ՙԻնքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին՚ ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

*որոշում եմ՝*

1.Ճանաչել քաղաքացի Ջեմա Արամի Հարությունյանի /ընտանիքի գլխավորը/ և նրա ընտանիքի անդամներ՝ Սնակ Կարապետի Թեներեջյանի /տղան/, Վիգեն Կարապետի Թեներեջյանի /տղան/ կողմից Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող փաստացի ավել օգտագործվող 24,1 ք/մ գյուղատնտեսական նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

2.Ավել օգտագործվող 24,1 ք/մ գյուղատնտեսական նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

19-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 119 Ա

### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 116-117 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով

*որոշում եմ՝*

1.Եղեգիս համայնքի ղեկավարի 18/06/2020թ. «Վարազդատ Հայկի Ղարիբյանի և նրա ընտանիքի անդամների սեփական տնամերձ հողամասին և բնակելի տանը հասցե տրամադրելու մասին» թիվ 116Ա որոշման հերթական /գրանցման/ համարում <<116>> թիվը փոխարինել <<117>> թվով:

2.Եղեգիս համայնքի ղեկավարի 18/06/2020թ. «Եղեգիս համայնքի եղեգիս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող Ջեմա Արամի Հարությունյանի եվ նրա ընտանիքի անդամների կողմից փաստացի օգտագործվող 24,1 ք/մ գյուղատնտեսական նշանակության հողամասի սեփականության իրավունքը ճանաչելու մասին մասին» թիվ 117Ա որոշման հերթական /գրանցման/ համարում <<117>> թիվը փոխարինել <<118>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*
19-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 թվականի N 120 Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/01/2020թ. թիվ 02-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19/07/2007թ. N843-Ն որոշման դրույթները

*որոշում եմ՝*

Ա/Ձ Ատոմ Գաբրիելյանին տալ Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի վարչական տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ երկրորդ կիսամյակի կտրվածքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ